

## ՀՕՐԱ ԲԱՆՏԻՆ ՄԷՉ

Դեռ փոքր էի. եկայ քեզի մինաւոր.  
 Մութ զընդանիդ մէջ այցի:  
 Մայրս հիւանդ էր. կը շըրջէի ե՛ս ազատ  
 Մէջտեղ բանտի եւ մահճի:  
 Լուր տըւին քեզ. եկար առջեւը դըրան  
 Վանդակապատ՝ որ - ոճի՛ր -  
 Կը բաժներ մեր ողջագուրումը կըղկաթ:  
 Եկար անխօս, վըշտակիր:

Ո՛րքան սիհար էիր եւ ո՛րքան աչքերդ  
 Ծարաւ էին արեւու.  
 Մօրութիդ տակ, կարծես ոսկրի վրայ բուսած,  
 Ո՛վ հայր, մեռել մ'էիր դու:

Նըշմարելուդ պէս զիս ժըպտիլ ըսկըսար.  
 Բայց այդ ժըպիտը բարի,  
 Այդ սուտ ժըպիտն էր նունուֆար մը ծաղկած  
 Լըճի մը վրայ արտօսրի:  
 Կարկառեցիր սեւ վանդակին ետեւէ  
 Շըրթունքներդ իմ շըրթներուն.  
 Բայց իրարու անոնք, աւա՛ղ, չըհասած՝  
 Մեր համբոյրին դողդոջուն՝

Նոյն ժամանակ եղան օրրան եւ դագաղ:  
 Ո՛հ, պիտի ո՛րչափ քեզի  
 Բաղձայի տալ ընդգրկումի մը մէջ տաք՝  
 Ազատ աշխարհը դուրսի,